ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«21» ապրիլի 2015թ. N 238-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՇՆԱՆԱՑԱՆ ԵՎ ԳԱՐՆԱՆԱՑԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՍԵՐՄԱՑՈՒԻ ԱՐԺԵՔԻ ՄԱՍՆԱԿԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել աշնանացան և գարնանացան մշակաբույսերի սերմացուի արժեքի մասնակի սուբսիդավորման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո տասնօրյա ժամկետում հաստատել սուբսիդավորման ենթակա աշնանացան և գարնանացան մշակաբույսերի սերմացուի տեսակները և դրանց սուբսիդավորման չափերը:
3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը՝ տնտեսական տարին ավարտելուց հետո՝ մեկամսյա ժամկետում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն ներկայացնել հաշվետվություն՝ կատարած աշխատանքների և իրականացրած միջոցառումների մասին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2015 թվականի ապրիլի 21-ի
N 238 -Ն որոշման

ԿԱՐԳ
ԱՇՆԱՆԱՑԱՆ ԵՎ ԳԱՐՆԱՆԱՑԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՍԵՐՄԱՑՈՒԻ ԱՐԺԵՔԻ ՄԱՍՆԱԿԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կանոնակարգվում են աշնանացան և գարնանացան մշակաբույսերի սերմացուի արժեքի մասնակի սուբսիդավորմանն ուղղված միջոցառումների իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի իմաստով օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) աշնանացան և գարնանացան մշակաբույսերի սերմացուի արժեքի մասնակի սուբսիդավորմանն ուղղված միջոցառումներ *(այսուհետ՝ միջոցառումներ)*՝ աշնանացան և գարնանացան մշակաբույսերի սերմացուի արժեքի մասնակի սուբսիդավորմանն ուղղված աշխատանքների իրականացում.

2) աշնանացան և գարնանացան մշակաբույսերի սերմացուի սուբսիդավորում՝ աշնանացան և գարնանացան մշակաբույսերի սերմացուի արժեքի մասնակի փոխհատուցում.

3) *միջոցառումների մասնակից*՝ միջոցառումների իրականացման գործընթացում ներգրավված պետական և տարածքային կառավարման մարմինները:

II. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3. Միջոցառումների իրականացման գործընթացում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն) համակարգում և վերահսկողություն է իրականացնում միջոցառումների իրականացման գործընթացի նկատմամբ:

4. Միջոցառումների իրականացման գործընթացում ներգրավված տարածքային կառավարման մարմինները՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերը՝ յուրաքանչյուր տարվա համար, նախարարության սահմանած ժամկետներում, նախարարությունն են ներկայացնում աշնանացան և գարնանացան մշակաբույսերի սերմացուի պահանջարկի մասին տեղեկություններ՝ նշելով համայնքը (կամ պետական պահուստային ֆոնդի հողերը), ցանվող տարածքի մակերեսը և անհրաժեշտ սերմացուի քանակը:

5. Մասնակի սուբսիդավորման ենթակա է տրամադրվող, օրենքով սահմանված կարգով հավաստագրված աշնանացան և գարնանացան մշակաբույսերի սերմացուի արժեքի մինչև 50 տոկոսը: Արժեքի մնացած մասը հողօգտագործողների կողմից վճարվում է կանխիկ, սերմացուի ձեռք բերման պահին:

6. Նախարարությունը, սույն կարգի 4-րդ կետում նշված տեղեկությունները ստանալուց հետո հնգօրյա ժամկետում, ընդհանրացնում է ստացված տեղեկատվությունը և դրա հիման վրա Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ներկայացնում համապատասխան հայտ:

7. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը՝ սույն կարգի 6-րդ կետում նշված հայտը ստանալուց հետո Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տվյալ տարվա պետական բյուջեով այդ նպատակի համար նախատեսված միջոցներից հատկացնում է համապատասխան ֆինանսական միջոցներ:

III. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

8. Միջոցառումների իրականացումից ակնկալվող արդյունքներն են՝

1) տեղական աշնանացան հացահատիկային մշակաբույսերի արտադրության ծավալների ավելացման համար նախադրյալների ստեղծում.
2) համալիր միջոցառումների արդյունքում երկրի ագրոպարենային համակարգում համեմատաբար կայուն իրավիճակի ձևավորում.
3) ընդհանուր ցանքատարածքներում գարնանացան մշակաբույսերի տարածքների ավելացում և ցանքաշրջանառության կիրառում.
4) ցանքատարածությունների ընդլայնման, բարձրարժեք սորտերի օգտագործման և ագրոտեխնիկական միջոցառումների բարելավման արդյունքում աշնանացան և գարնանացան մշակաբույսերի արտադրության ծավալների ավելացում:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ